ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ №22-Լ

«23» 01 2024 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 4 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 12-ի՝ «Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 88 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33 հրամանով հաստատված կարգի 34-րդ կետը, Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների լիակատար ստուգում՝ գույքագրում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների լիակատար ստուգում՝ գույքագրում (այսուհետ՝ գույքագրում) կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հովհաննիսյան Վահե -	Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Մանուկյան Լիաննա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ (հանձնաժողովի անդամ)
Օսիպյան Լիլիթ -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ):

2. Հանձնաժողովին՝ յուրաքանչյուր տարի մինչև մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների գույքագրման արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությունում առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների գույքագրում կատարելու մասին» N 4 հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական

դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**